

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

07.08.2013



ՀՀ Կոտայքի մարզպետ Կ.Շահգալոյանը աշխատանքային այցելությունների շրջանակում հանդիպել է մարզի մի շարք համայնքների առողջապահական և կրթական հիմնարկների տնօրենների, ինչպես նաև տվյալ համայնքների ղեկավարների հետ:

Մարզպետը նախ այցելել է Արտավազ համայնք, որտեղ ծանոթացել է դպրոցների առկա վիճակին և տնօրենների հետ քննարկել է վերանորոգման հրատապության հարցերը, որից հետո այցելել է նաև համայնքում կառուցվող մանկապարտեզի շինարարական հրապարակ: Տեղում ծանոթացել է իրականացվող աշխատանքներին և գրուցել շինարարների հետ:

Այնուհետև մարզպետն այցելել է Մեղրաձոր համայնք, որտեղ ծանոթացել է դպրոցի շինարարական աշխատանքների ավարտական փուլին: Համայնքի ղեկավարի և դպրոցի տնօրենի հետ քննարկել է կատարված, ինչպես նաև կատարվելիք աշխատանքների անհրաժեշտության մասին, որից հետո այցելել է գյուղի գործող մանկապարտեզ: Համայնք կատարված այցելության վերջում Կ.Շահգալոյանը շրջել է Մեղրաձորի առողջության պահպանման առաջնային կենտրոնով, իսկ աշխատակազմի հետ գրուցել է ընտանեկան բժշկության զարգացման ու կատարելագործման հիմնախնդիրների վերաբերյալ:

Աշխատանքային այցելության վերջում ՀՀ Կոտայքի մարզպետն այցելել է Աղավնաձոր համայնք, որտեղ ծանոթացել է կիսակառույց մանկապարտեզի առկա վիճակին և համայնքի ղեկավարի հետ քննարկել է անհրաժեշտ ներդրումների և շինարարական աշխատանքները ավարտին հասցնելու, ինչպես նաև շահագործման խնդիրների մասին: